

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ**

Հ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լրացել է 22 տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) գործունեության մեկ տարին, և, դրանց գործունեության առաջին ամփոփումների վերլուծությունից, ինչպես նաև համայնքների 1998 թ. բյուջեների կազմման մոտեցումներից ելնելով, կարելի է արդեն քիչ թե շատ ամբողջական դատողություններ անել նորաստեղծ համակարգի մասին՝ խնդիր ունենալով վեր հանել ՏԻՄ-երի կայացման և հետագա զարգացման տարբեր մոտեցումները:

ՏԻՄ-երի գործունեության վերլուծությունները ցանկալի և անհրաժեշտ է անել տարբեր ուղղություններով՝ հանրապետության, առանձին մարզերի, ինչպես նաև գյուղական, քաղաքային և թաղային համայնքների կտրվածքով: Ընդ որում, այնքանով, որքանով ՏԻՄ-երին վերապահված բոլոր լիազորությունների իրականացման հիմնական երաշխիքը ֆինանսական միջոցների առկայությունն է, և այս առումով, համայնքների բյուջեն է ՏԻՄ-երի ֆինանսական կառավարման հիմքն ու գործունեության հայելին, ապա դրա միջոցով առավելագույնս հնարավոր է ամբողջական և սթափ գնահատել, թե ինքնակառավարման այդ համակարգը որքանով է նպատակամղված որոշակի վարչատարածքի սահմաններում (համայնքներում) մարդկային զարգացման համար ընթացիկ և հեռանկարային առումով բարեկեցիկ պայմաններ ստեղծելուն: Ահա այս՝ համայնքների բյուջեների միջոցների ձևավորման և օգտագործման վերոհիշյալ դրսևորումներից ելնելով՝ փորձենք գնահատել Շիրակի մարզում ՏԻՄ-երի կայացման գործընթացն ու տալ որոշ առաջարկություններ: Հարկ է որոշ պատկերացում տալ Շիրակի մարզի մասին:

Առաջին. այն բավականին մեծ է՝ 2640 քառ. կմ, զբաղեցնում է Ախուրյան գետի արևելյան հատվածը՝ ընգրկելով Ախուրյանի, Ամասիայի, Աշոցքի, Արթիկի նախկին վարչական տարածքներն ու մարդկեներոնը՝ Գյումրի քաղաքը: Մարզի բնակչությունը մոտ 357 հազար մարդ է, բնակավայրերի թիվը՝ 131: Հանրապետությունում մեծ քանակությամբ շինանյութերի կուտակումներով (տուֆ, հրաբխային խարամներ, պեմզա, կրարար և այլն) աչքի ընկնող այս մարզը տարբեր առումներով կարևոր տեղ է գրավում հանրապետությունում:

Երկրորդ. Շիրակի մարզում է գտնվում բնակչության թվով և տնտեսական նշանակությամբ հանրապետության երկրորդ քաղաքը, որը բնակչության տարաբնակեցման, արտադրողական ուժերի տեղաբաշխման տեսանկյունից ֆունկցիոնալ ղեկ է խաղացել:

Երրորդ. Շիրակի մարզը հանրապետության կարևորագույն արդյունաբերական հանգույցներից է, ուր կան 68 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ (որից 36-ը՝ Գյումրիում): Ճիշտ է, ներկայումս դրանք աշխատում են թերթեղված՝ տարեկան թողարկվում է ընդամենը 7,0—7,5 մլրդ. դրամի (հիմ-

նականում սննդի, թեթև արդյունաբերության, մեքենաշինության, սարքաշինության, էլեկտրատեխնիկական) արտադրանք, շինանյութեր, սակալն արտադրական պոտենցիալը, աշխատուժի կլանման հնարավորությունները ավելի մեծ են, և մարդը առկա արտադրական կարողությունների քիչ թե շատ բնականոն դործարկման, վերակառուցման դեպքում հնարավորություն ունի դառնալու հանրապետության արդյունաբերության խոշոր կենտրոններից մեկը:

Վոտրոդ. Շիրակի մարդի տնօրինության տակ են սակավահոգ հանրապետության վարելահողերի շուրջ 1/4-ը (շուրջ 85 հազ. հա, որից 24,7 հազարը՝ ջրովի), որոնց արդյունավետ օգտագործումը, Արարատյան դաշտի հետ մեկտեղ, ռազմավարական նշանակություն ունի հանրապետության բնակչության պարենային ապահովվածության խնդրում: Նշենք, որ այս վարելահողերը հիմնականում տրամադրվել են հացահատիկի (տարեկան 80 հազ. տ), կերային կուլտուրաների (տարեկան մոտ 150 հազ. տ), կարտոֆիլի և բանջարեղենի արտադրությանը:

Հիեզեհոդ. Շիրակի մարզը իր սոցիալ-տնտեսական և ռազմավարական ինդիկներով առանձնանում է մյուս մարզերից (բացի Լոռու մարզից) նրանով, որ 1988 թ. երկրաշարժից ավերված բնակավայրերի վերականգնման և արտադրական հզորությունների վերաթողարկման խնդիրներ ունի: Բավական է նշել, որ Գյումրիում բնակարանով ապահովված է բնակչության 1/3-ը միայն, իսկ արդյունաբերության մեջ զբաղված է ընդամենը 16000 մարդ: Մարզում գործազրկության մակարդակը 1997 թ. սկզբին կազմել է 25,1%, որն ավելի քան երկու անգամ գերազանցում է հանրապետության միջին մակարդակը և ամենամեծն է մարզերի մեջ:

Շիրակի մարզում տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորումը գործողության մեջ է դրվել 1996 թ. նոյեմբերի 10-ի տեղական ընտրություններով, որի, ինչպես նաև դրա երկրորդ փուլի (1997 թ. փետրվար) արդյունքներով ընտրվեցին 119՝ քաղաքային (3) ու գյուղական (116) համայնքների դեկավարները և դրանց համայնքային ավագանու անդամները:

Ըստ համայնքների նախագծումների, Շիրակի մարզի համայնքների բյուջեների եկամուտները ամբողջությամբ վերցրած 1997 թ. համար նախատեսվել էր 1378,6 մլն. դրամ, մինչդեռ փաստացի եկամուտների ծավալը կազմել է 1084,3 մլն. դրամ կամ նախատեսվածի 78,6%-ը: Դա նշանակում է, որ մարզի բնակչության մեկ շնչի հաշվով փաստացի ապահովվել է 2988 դրամի ծախսումների հնարավորություն, ինչը, պիտի համաձայնենք, շատ փոքր գումար է յուրջ աշխատանքներ կատարելու համար: Եթե առանձնացնենք մարզի քաղաքները, որոնց բաժին է ընկնում ամբողջ փաստացի եկամուտների 65,9%-ը (Գյումրին հանրապետության ամենամեծ համայնքն է՝ 584,5 մլն. դրամ բյուջեով), ապա հայտնի կդառնա, որ միջին հաշվով մեկ գյուղական համայնքի բյուջեն կազմել է 3,2 մլն. դրամ, իսկ գյուղական բնակչության մեկ շնչի հաշվով ընկնող եկամուտը՝ 3072 դրամ:

Թե ի՞նչ աղբյուրների հաշվին են գույացել ամբողջությամբ վերցրած մարզի համայնքների եկամուտները, ի՞նչ տիպի համայնքների կողմից և ի՞նչ չափով, ցույց է տալիս աղյուսակ 1-ը:

Աղյուսակ 1

Շիրակի մարզի համայնքների 1997 թ. հավաքական բյուջեի եկամուտների
առանձին տեսակների կառուցվածքը ըստ ֆազային և գյուղական համայնքների

	Հողի հարկ	Վարձակալության հողի վրա	Գնալվաճառի հարկ	Պետական հարկ	Անձնական հարկ	Բնակավայրի հարկ	Գնալվաճառի հարկ	Բնակավայրի հարկ
ք. Գյումրի	10.3	17.5	87.3	68.8	66.3	34.5	68.3	54.0
ք. Արթիկ	0.9	6.0	3.3	12.2	2.0	3.6	13.1	9.0
ք. Մարաշիկ	0.2	2.2	0.7	3.2	2.0	1.5	4.0	2.9
Արտաշատ	39.9	14.4	3.1	8.7	16.9	25.4	3.5	14.0
Արթիկ	18.8	26.5	1.3	1.2	5.2	13.9	1.4	8.7
Անի	9.0	9.6	0.3	0.3	1.7	6.1	1.2	3.3
Ամասիա	10.5	17.4	1.0	1.2	4.0	8.4	2.7	5.1
Աշտարակ	10.3	6.4	1.0	2.4	1.9	6.6	3.8	5.0
Ընդամենը՝ մարզում	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Եկամուտի ա- ռանձին տեսակների բաժինը մարզի հա- մայնքների ընդհանուր եկամուտ- ների մեջ	20.8	6.1	4.4	6.0	6.3	42.6	57.4	100

Տվյալները վկայում են, որ օրենքով սահմանված եկամուտների շրջանակում Շիրակի մարզի համայնքների բյուջեների ձևավորման հիմնական աղբյուրը եղել են դոտացիաները՝ 57,4 և հողի հարկը՝ 20,8%: Մնացած եկամտի աղբյուրներին՝ վարձակալական վճարին, պետական տուրքին, դույրահարկին, այլ մուտքերին միասին վերցրած բաժին է ընկել եկամուտների 21,8%-ը: Միա-
ժամանակ նշենք, որ մարզում Գյումրի քաղաքը խիստ առանձնանում է իր մասշտաբներով: Քաղաքը բյուջետային եկամուտների բոլոր տեսակների առումով, բացառությամբ հողի հարկի և դրա վարձակալության վճարի, ձևավորել է մարզի համայնքների միացյալ բյուջեների եկամուտների կեսից ավելին՝ դույրահարկի դեպքում՝ 87,3, պետտուրքի՝ 68,8, դոտացիաների՝ 68,3, ընդամենը՝ եկամուտների 54%-ը:

Բերված տվյալներից երևում է, որ մարզում ունենք ընդգծված տարբերություններ գյուղական և քաղաքային համայնքների կողմից մարզի մասշտաբով այս կամ այն եկամտի ձևավորման խնդրում: Այսպես, քաղաքային համայնքների կողմից միասին վերցրած ձևավորվել է մարզում հավաքած դույրահարկի 91,3, պետտուրքերի՝ 86,2, դոտացիաների՝ 85,4%-ը, մինչդեռ հողի հարկի և հողի վարձակալման վճարի հարցում դերակշռում է գյուղական համայնքների ներդրումը, համապատասխանաբար՝ 88,6 և 74,3%: Բնականաբար, դա արդյունք է մարզում քաղաքային, գյուղական համայնքների բյուջեների եկամուտների ձևավորման առանձնահատկությունների, ինչի մասին վկայում են աղյուսակ 2-ի տվյալները:

Իսկապես, մարզի քաղաքային համայնքները հողի հարկի հաշվին ձևավորել են իրենց բյուջեի 1,9—4,0%-ը, մինչդեռ գյուղական համայնքները 42,7—59,4%-ը: Հողի վարձավճարը ներառելու դեպքում սխալներ էլ ավելի է սրվում:

Աղյուսակ 2

ՀՀ Շիրակի մարզի քաղաքային և գյուղական համայնքների 1997 թ. բյուջեի
եկամուտների կառուցվածքը՝ ըստ եկամուտների տեսակների

	Քաղ. Գյուղերի	Բաղ. Արթիկ	Քաղ. Մարալիկ	Նախկին վարչական շրջաններում (առանց շրջկենտրոնների)				
				Ախուր.	Արթիկ	Անի	Ամասիա	Աշոցք
Հողի հարկ	4,0	2,1	1,0	59,4	58,1	57,5	42,8	42,7
Հողի վարձավճար	2,0	4,0	4,6	6,3	23,9	17,9	20,4	7,6
Գույքահարկ	7,1	1,6	1,1	1,6	0,9	0,3	0,9	0,8
Պեւ. տուրքեր	7,6	8,0	10,5	3,7	1,1	0,6	1,4	2,8
Այլ տուրքեր	6,6	1,2	3,0	6,3	4,1	2,8	4,1	2,0
Դասացիա	72,7	83,1	78,3	22,3	11,9	20,9	30,4	44,1
Ընդամենը՝ եկամուտներ	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

քաղաքներում 6—6,5% է, մինչդեռ գյուղական համայնքներում կազմում է 60,3—82%: Էական է նաև պետական տուրքից ձևավորված եկամուտների տարբերությունը. քաղաքներում այն կազմում է ամբողջ եկամուտների 8—10,5%-ը և, որպես այգայիսին, էական նշանակություն ունեցող կայուն եկամուտ է, մինչդեռ գյուղական համայնքներում այն կազմում է ընդամենը 0,6—3,7%-ը: Իր հերթին գույքահարկը՝ որպես բյուջեի եկամտի աղբյուր, կարևոր դեր է խաղում Գյումրու համայնքներում (ամբողջի 7,1%-ն է), մինչդեռ բավական ցածր է այդ դերը փոքր քաղաքներում՝ Արթիկում, Մարալիկում և հաակապես գյուղական համայնքներում (ամբողջի ընդամենը 0,3—1,6%-ը):

Պակաս հակադիր չէ պատկերը դոտացիաների խնդրում: Մարզի երեք քաղաքային համայնքներում՝ Գյումրիում, Արթիկում, Մարալիկում, դրանք կազմում են համայնքների ամբողջ եկամուտների՝ համապատասխանաբար 72,7, 83,1, 78,3%-ը, մինչդեռ գյուղական համայնքներում՝ 11,9—44,1%-ը, Արթիկի նախկին վարչական շրջանի 23 գյուղական համայնքներից 16-ը բյուջեն ձևավորում են բացառապես սեփական եկամուտների հաշվին, Ամասիայի վարչական շրջանում՝ 19-ից 17-ը, Ախուրյանի 33 համայնքներից՝ 22-ը: Դա նշանակում է, որ ֆինանսական ինքնուրույնության տեսանկյունից գյուղական և քաղաքային համայնքները խիստ տարբեր մակարդակի վրա են գտնվում: Այս բոլորից հետևություններ.

Առաջին, համայնքների եկամուտների աղբյուրների և դրանց չափերի օրենսդրական փոփոխությունները գյուղական և քաղաքային համայնքների եկամուտների կառուցվածքի ընդգծված տարբերությունների պատճառով միանշանակ չեն անդրադառնալու դրանց եկամուտների մակարդակի և շահագրքերը բաժնիկների վրա: Հետևաբար, հանրապետությունում համայնքների կըտըրվածքով բյուջետային քաղաքականության հիմքում պետք է դրվեն տարբերակված մոտեցումներ գյուղական և քաղաքային համայնքների նկատմամբ, որ այսօր անտեսվում է:

Երկրորդ, խիստ ցածր է քաղաքային համայնքների ֆինանսական ինքնուրույնության մակարդակը, ինչը ամեն անգամ կարող է վտանգել դրանց կողմից նախատեսված ծրագրերի իրականացումը, նվազեցնել տեղական նախաձեռնությունն ու սեփական պատասխանատվության աստիճանը:

Եթե անգամ հաշվի առնենք այն, որ 1998 թ. որոշ առաջընթաց քայլ կատարվեց համայնքների ֆինանսական ինքնուրույնության ամրապնդման ուղղությամբ (դրանց ամրագրվեց եկամտահարկի 15% մասհանումի տարբերակով), այդուհանդերձ, հիմնախնդիրը մնում է օրակարգում: Ինչ վերաբերում է գյուղական համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձր մակարդակին, ապա այն ավելի շուտ արդյունք է ներկայումս հիմնականում հողի հարկի հաշվին բնակչության մեկ շնչի հաշվով գյուղական բյուջեի այնպիսի մակարդակի ապահովման, որը մոտ է և գերազանցում է հանրապետական միջինը և դոտացիա քիչ է ակնկալում:

Մերում, Շիրակի մարզի համայնքների եկամուտների ուսումնասիրությունը, ըստ քաղաքային և գյուղական տիպերի, մեզ բերում է այն համոզման, որ այս երկու տիպերի մեջ առկա են գյուղական համարվող առանձին համայնքներ՝ օրինակ Ախուրյանը, Աշոցքը, որոնք, որպես այդպիսին, ավելի մոտ են քաղաքային տիպին (տվյալ մարզում, օրինակ Մարալիկին), ունեն քաղաքին հատուկ որոշակի ենթակառուցվածքներ, որոնց շահագործման միջոցով պարտադիր լիազորությունների կատարումը եկամուտների գոյացման նախատեսված օրինական դաշտի շրջանակներում անհրաժեշտաբար պահանջում է հատկացումներ պետական բյուջեից:

Կարծում ենք, որ առաջիկայում քաղաքային և գյուղական համայնքների առումով տարբերակված մոտեցում ցուցաբերելով դրանց եկամուտների օրենսդրական դաշտի կարգավորմանը, միաժամանակ նպատակահարմար է առանձնահատուկ վերաբերմունք ցուցաբերել (գուցե կարգավիճակի ճշտման առումով) վերահիշյալ քաղաքատիպ համայնքների նկատմամբ:

Շիրակի մարզի քաղաքային և գյուղական համայնքների բյուջեների ծախսերի կառուցվածքի ուսումնասիրությունը մեզ բերել է մի համոզման ես, որ գյուղական շատ համայնքներ, լինելով փոքր և, բնականաբար, ձևավորելով շատ փոքր բյուջե, ըստ էության, տեղիք են տալիս ֆինանսական միջոցների փոշիացման, անարդյունավետ օգտագործման: Այդ մասին են վկայում աղյուսակ 3-ի տվյալները: Այսպես, եթե մարզի քաղաքային համայնքներում միայն աշխատակազմի պահպանման համար տրվող աշխատավարձը և դրա վրահեր, այսինքն՝ չհաշված այլ ծախսումները, կազմում են ամբողջի 43,3—58,6 %-ը, ապա շատ գյուղերում այն անցնում է 70—80 %-ից (Գետք, Ջաջուռ և այլք): Կարծում ենք, հանրապետության 873 գյուղական համայնքների մի զղալի մասը այս վիճակում է (մինչև 500 բնակիչ ունեցող համայնքների թիվը հանրապետությունում կազմում է բոլոր համայնքների թվի 31,6%-ը, մինչև 1000 բնակիչ ունեցողներինը՝ 51,7%-ը), և համայնքների խոշորացման, ուժեղացման հարցը համազգային լրջագույն խնդիրներից մեկն է, որի ուղղությամբ լուծումներ պետք է փնտրվեն և իրացվեն:

Շիրակի մարզում առանձին հետաքրքրություն է ներկայացնում շուրջ 25 լեռնային համայնքների (գյուղերի) խնդիրը, որոնք գտնվում են ծովի մակերևույթից 1700—2000 մ բարձրության վրա և սակավաբնակ են (25-ից 10-ում բնակվում է մինչև 215 բնակիչ, բոլորը միասին վերցրած՝ 11237 բնակիչ): Նրաված գյուղերում գրեթե չի օգտագործվում շուրջ 4000 հա վարելահող, 10000 հա արոտավայր և 2000 հա խոտհարքներ, այստեղ ջրովի է վարելահողերի ընգա-

Աղյուսակ 3

ՀՀ Շիրակի մարզի բաղաժեմերում և առանձին գյուղական համայնքներում
ծախսերի կառուցվածքը ըստ հոգվածների

	Կ ա ղ ա ք ն ե ռ			Գ յ ու ղ ե ռ							
	Գյուղի	Այլ	Մարավիկ	Ամսիա	Այլ	Այլ	Այլ	Այլ	Այլ	Այլ	Այլ
Ընդամենը՝ ծախսեր այդ թվում՝	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Աշխատա- վարձ	32,6	43,4	42,3	41,8	57,3	38,5	54,7	63,2	51,5	51,0	46,7
Աշխատա- վարձի վրա Տնտ. և դրա- սան. ծախսեր	11,5	16,2	14,8	18,2	19,3	14,0	17,8	24,0	19,0	17,4	18,4
Գործուղում էլ. էներգիա Վառ. և ցեղ.	1,2	1,2	1,4	4,5	3,1	1,1	5,6	3,6	5,8	6,2	2,1
Ջրամուղ կո- յուղ. և կոմ. ծախսեր	0,3	0,3	0,2	0,5	0,3	0,2	1,3	—	2,5	2,3	1,4
Մենդի	0,3	1,2	1,2	1,1	2,1	1,2	—	—	1,2	4,4	0,5
Կապի	0,7	0,1	1,1	0,4	—	—	1,6	—	1,8	1,6	5,0
Գույք և սար- քերի ձեռք- բեր.	32,1	23,0	28,2	11,5	5,0	19,8	—	—	8,7	4,1	—
Տրանսպ. սպահան.	5,0	3,6	1,6	3,6	4,6	4,8	—	—	—	—	3,8
Այլ ծախսեր	0,4	0,6	0,7	0,4	2,0	0,8	—	2,6	—	—	—
	3,7	0,6	6,7	1,6	1,0	9,7	—	—	—	—	6,2
	1,1	1,1	2,6	2,1	4,1	3,0	7,5	3,2	4,3	—	8,3
	8,8	10,0	6,4	6,3	0,1	6,9	11,6	3,4	4,2	13,0	9,7

Հենը 6,5%-ը և բնակչության անբարենպաստ պայմանների դեպքում բեր-
ի, ասել է թե եկամտի ստացման երաշխիքները շատ ցածր են: Այս գյուղերի
(Համայնքների) մեծ մասը բյուջեի սեփական եկամուտների ձեռքում շատ
փոքր հնարավորություններ ունենալու պայմաններում (25-ից 12-ի սեփական
եկամուտները չեն անցնում 1,5 մլն. դրամից) ծախսերը փակում են ի հաշիվ
դոտացիայի (25-ից 14-ը):

Միանշանակ պետք է արձանագրել, որ եղած միջոցներով այդ գյուղերի
սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման ուղղությամբ ոչ մի լուրջ աշխա-
տանք չի կատարվում, և վտանգի տակ է սակավաբանագ գյուղերի պահպանման
հարցը: Նման խնդիրներ կան նաև հանրապետության մյուս մարզերում, և,
ըստ երևույթին, հիմնախնդրի լուծումը պետական հովանավորություն է պա-
հանջում հանրապետության տարածքային զարգացման (տարաբնակեցման)
ծրագրերի շրջանակներում:

Մեկ դիտարկում ևս: Մարզի գրեթե բոլոր համայնքներում գերակշռում է
ծախսային բյուջեի տիպը, և փաստորեն, եռամյա ծրագրերի կազմման անտե-
ղումը (դրանք, որպես կանոն, չեն մշակվել), առանձին ոլորտների հիմնախն-
դիրների լուծման ուղղությամբ ծրագրերի բացակայությունը թույլ չեն տվել
ունենալ նպատակային, ուղղորդված ծախսեր, որոշակի խնդիրների լուծման
ուղղությամբ մեթոդական հետևողականություն: Այս առումով բարձրագույն է

եղել հիմնադար աշխատանքներ կատարելու ուղղությամբ ֆինանսավորումը (ֆոնդային ծախսումներ):

Համայնքների ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ 1998 թ. կատարվել են իրական քայլեր (վարչական և ֆոնդային բյուջեների առանձնացում, պահուստային ֆոնդի ձևավորում, անցում համահարթման դոտացիաների և այլն), սակայն կարծում ենք, մեր կողմից վերհանված հիմնախնդիրները, արված առաջարկությունները ամենևին էլ չեն դադարում արդիական լինելուց:

ПРОБЛЕМЫ ФИНАНСОВОГО ОБЕСПЕЧЕНИЯ ОРГАНОВ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В ШИРАКСКОЙ ОБЛАСТИ

О. К. АРУТЮНЯН

Р е з ю м е

С точки зрения финансовой самостоятельности сельские и городские общины находятся на подчеркнуто различных уровнях. В бюджетной политике по отношению к сельским и городским общинам необходим дифференцированный подход, чего не наблюдается в настоящее время.

Крайне низок уровень финансовой самостоятельности городских общин, в результате чего зачастую может возникнуть угроза срыва выполнения намеченных ими программ, а это также приводит к снижению собственной ответственности и инициативы.

Основным источником доходов для формирования бюджетов общин Ширакской области были дотации и налог на землю--соответственно 57.4% и 20.8% от доходной части. За счет остальных источников (арендная плата, пошлины, налог на имущество и др.) был сформирован лишь 21.8%.

Необходимо отметить также, что утвержденные бюджеты во всем общинам решают только текущие проблемы и не просматриваются целевые перспективные затраты. Это обусловлено не столько дотационным характером бюджетов, сколько отсутствием трехлетних программ (на срок деятельности выборных органов власти местного самоуправления) развития общин и последовательных подходов по решению основных проблем.